ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10. 1953 Общественные науки

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՏԵՐՏԵՐՅԱՆ

1953 թ. հոկտեմբերի 6-ին, երկարատև հիվանդությունից հետո, վախճանվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, ականավոր գրականագետ, Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական համալսարանի դասախոս, ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Արսեն Հարությունի Տերտերյանը։



Պրոֆեսոր Տերտերյանը մոտ կես դար իր բեղմնավոր գրիչը ի սպաս է դրել հայագիտության զարգացմանը, հայ գրականագիտությունը հարստացնելով մի քանի տասնյակ մեծարժեք ու հմտալից ստեղծագործություններով։ Նա, միաժամանակ, երկար տարիներ պաշտոնավարելով Երևանի Պետական համալսարանում, պատրաստել է գրականագետ կադրերի մի ամբողջ սերունդ։

Պրոֆ. Ա. Հ. Տերտերյանը ծնվել է 1882 թ. Լեռնային Ղարաբաղի Շուշիքենդ գյուղում, որտեղ ստացել է իր տարրական կրթությունը։ Այնուհետև նա տեղափոխվում է Շուշի և սովորում Գուշու հայկական սեմինարիայում։

1902 թ. ավարտելով միջնակարգ կրթությունը, նա գալիս է Էջմիածին և Գևորգյան ճեմարանում շարունակում իր ուսումը։ 1905 թվականին ավարտում է ճեմարանի լսարանական-մասնագիտական բաժինը և, վերադառնալով Շուշի, նշանակվում հայկական սեմինարիայի ուսուցիչ։

Բնական է, որ Գևորգյան ճեմարանը իր սահմանափակ գիտելիքներով չէր կարող գոհացնել հարցասեր և ուսման ծարավ երիտասարդի պահանջները։ Բարձրագույն ուսումը Ռուսաստանի կենտրոնական քաղաքներից մեկում շարունակելու համար, նա մեկնում է Ռուսաստան և Պետերբուրգում երկու տարի (1907—1908 թթ.) լսում Պսիխո-նեվրոլոգիական ինստիտուտի դասընթացը, որը դժբախտաբար չի կարողանում ավարտել նյութական ծանր պայմանների հետևանքով և հարկադրված է լինում վերադառնալ Շուշի, շարունակել ուսուցչական պաշտոնը։

Ռուսաստանյան այդ երկու տարիները Տերտերյանին կապում են ռուսական քննադատական մտքի խոշորագույն ներկայացուցիչներ Բելինսկու, Չերնիշևսկու և ուրիշների ստեղծագործությունների հետ։

1909 թվականին Ա. Տերտերյանը գալիս է Երևան և նշանակվում Երևանի թեմական դպրոցի ուսուցիչ, որտեղ պաշտոնավարում է մինչև

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը 1920 թ. հիմնադրվում է Երևանի Պետական համալսարանը։ Ա. Տերտերյանը դառնում է նրա առաջին դասախոսներից մեկը ու այնուհետև իր ամբողջ կյանքը կապում է համալսարանի ու Երևանի այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, երկար տարիներ զեկավարելով համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետի հայ գրականության ամբիոնի աշխատանքները։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման քսանամյակի առթիվ Սովետական Հայաստանի կառավարությունը Ա. Տերտերյանին շնորհում է գիտության վաստակավոր գործչի կոչում, իսկ Հայաստանում սովետական կարգերի հաստատման քսանհինգամյակի օրերին՝ Սովետական կառավարությունը նրան պարգևատրում է Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով։

Հաշվի առնելով սովետահայ գրականության ասպարեզում նրա ունեցած բեղմնավոր գործունեությունը, 1942 թ. համալսարանի գիտական խորհուրդը նրան շնորհում է ֆիլոլոգիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։

1943 թվականի նոյեմբեր ամսին ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշմամբ հիմնադրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան։ Պրոֆեսոր Տերտերյանը դառնում է Ակադեմիայի առաջին իսկական անդամներից մեկը և եռանդուն կերպով մասնակցում Ակադեմիայի գիտահետազոտական աշխատանքներին՝ որպես Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատող։

Պրոֆ. Ա. Տերտերյանն իր գրականագիտական գործունեությունն սկսել է դեռևս ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին՝ 1905 թվականին հանդես գալով մամուլում հայ գրականությանը նվիրված քննադատական հոդվածներով։ 1910 թվականից սկսած լույս են տեսնում նրա մի շարք ծավալուն աշխատությունները Միքայել Նալբանդյանի (1911), Շիրվանզադեի (1911), Հովհաննես Հովհաննիսյանի, Մուրացանի, Նար-Դոսի, Վահան Տերյանի, Հովհաննես Թումանյանի և այլ հայ գրողների մասին։

Ինչ խոսք, որ նրա այս շրջանի ստեղծագործությունները իրենց վրա կրում են ժամանակի իդեալիստական էսթետիկայի, հատկապես գերմանական հոգեբանական դպրոցի որոշակի ազդեցությունը, սակայն, միաժամանակ պետք է նշել, որ Տերտերյանի վերոհիշյալ ուսումնասիրությունները հայ քննադատական մտքի մեջ նորություն էին նրանով, որ հակադրվելով տրադիցիոն լիբերալ գրականագիտությանը, գնահատում, արժեքավորում էին հայ գրականության դեմոկրատական հատվածի գրական ժառանգությունը։

Առաջին անգամ Տերտերյանն է, որ ըստ արժանվույն գնահատել ու բարձրացրել է Մուրացանին ու Նար-Դոսին, որպես խոշոր ռեալիստ գրողների։

Ա. Տերտերյանի գիտական գործունեությունը լայնորեն ծավալվում է Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, երբ գիտության տարբեր բնագավառներում աշխատող մասնագետների համար ստեղծագործական լայն հնարավորություններ են ապահովվում։ Ա. Տերտերյանը մանկավարժական-դասախոսական աշխատանքին զուգընթաց մեծ եռան-

դով նվիրվում է գիտական աշխատանքի, պարբերական մամուլում հրատարակելով բազմաթիվ հոդվածներ։

Այդ տասնամյակումն է, որ նա ձեռնարկում է հայ գրականության պատմության դասընթացն ստեղծելու գործին։

Դեռևս 1922 թ. Հայաստանի Պետական Հրատարակչությունը ձեռագրի իրավունքով հրատարակում է Երևանի Պետական համալսարանում Տերտերյանի կարդացած դասախոսությունների սղագրության առաջին պրակը, որտեղ նոր մեկնաբանությամբ ներկայացվում էր հայ նոր գրականության սկզբնավորությունը և քննության առնվում Խ. Աբովյանի, Պ. Պռոշյանի, Ռաֆֆու, Սունդուկյանի, Ծերենցի, Շիրվանզադեի ստեղծագործությունները։ Հետագայում Տերտերյանը Հեռակա մանկավարժական ինստիտուտի և Պետական համալսարանի լեզվաբանական ֆակուլտետի համար գրում է հայ գրականության պատմության առաջադրությունները, որոնք կարող են կազմել մի ստվար հատոր։

Վերոհիշյալ առաջադրությունները, ըստ էության, հանդիսանում էին հայ գրականության պատմության դասընթացի առաջին սիստեմատիկ շարադրանքը սովետական պայմաններում, այլ խոսքով, հայ գրականության պատմության մարքսիստական գնահատման առաջին փորձը։

Պրոֆ. Տերտերյանը քննադատաբար օգտագործելով նախասովետական տարիների լիբերալ և դեմոկրատական գրականագիտության ստեղծած նվաճումները, քննադատական մոտեցում ունենալով նաև իր սեփական սխալների նկատմամբ, հայ գրականության պատմության այդ դասընթացում փորձում էր հեղինակների աշխատությունները քննության առնել հասարակական-քաղաքական պայմանների ֆոնի վրա, ցույց տալ դրանց սերտ կապը ժողովրդի հետ, ռուսական և համաշխարհային գրականության նվաճումների հետ։

1941 թվականին լույս է տեսնում պրոֆ. Տերտերյանի մի ծավալուն մոնոգրաֆիկ աշխատությունը, նվիրված Խաչատուր Աբովյանին, աշխատություն, որի մեջ երևում է անվանի գրականագետի լայն իրազեկությունը ոչ միայն Աբովյանի հետ կապված բոլոր հարցերին, այլև ամբողջ հայ գրականությանն ու համաշխարհային գրականությանը, մասնավորապես նրա լավ իրազեկությունը ռուսական առաջավոր մտքին։

Պրոֆ. Ա. Տերտերյանի գիտական գործունեությունը նոր թափ է ստանում Հայրենական Մեծ պատերազմի տարիներին։ Ի պատասխան գերմանա-ֆաշիստական զավթիչների ոտնձգությունների, մեծ գիտնականը լարում է իր բոլոր ջանքերը, որպեսզի գիտությունը ծառայեցնի սովետական ժողովուրդների պայքարին՝ ընդդեմ գերմանա-ֆաշիստական հորդաների։ Այդ է վկայում հատկապես այն փաստը, որ Տերտերյանը այդ տարիներին գերազանցապես փորձում է վեր հանել հայ գրողների ստեղծագործության այն կողմերը, որոնք անմիջապես արձագանքում էին օրվա հուզող հարցերին և պատասխանում ռազմաճակատի պահանջներին։ Իսկ այդ հարցերից ամենից կարևորներն էին հայրենասիրության և ժողովուրդների բարեկամության գաղափարները։ Տերտերյանը գրում է «Սունդուկյանը և ժողովուրդների բարեկամությունը», «Հ. Թումանյանի հայրենասիրական պոեզիան», «Հազարոս Աղայանը և ժողովուրդների հե-

բոսությունը», «Ալիշանը և հայրենասիրությունը», «Հայրենասեր կինը Ծերենցի երկերում» և այլն։

Վերոհիշյալ աշխատությունները գրված են ջերմ շնչով, հայրենասիրական վարակիչ հուզականությամբ, մի բան, որը վկայում է նրանց հեղինակի սոցիալիստական վառ հայրենասիրության ու հաղթանակի նկատմամբ անսահման հավատի մասին։ Նույն այդ տարիներին Տերտերյանին զբաղեցնում է ռուս և հայ ժողովուրդների գրական կապերի գիտական բացահայտումը։ Նա հրատարակում է մի քանի արժեքավոր աշխատություններ, նվիրված այդ կարևոր հարցին։ Դրանցից հիշատակենք «Վալերի Բրյուսովը և հայ կուլտուրան», Ռելինսկուն նվիրված ընդարձակ մոնոգրաֆիան, Կոլցովին նվիրված աշխատությունը և այլն։

Պրոֆ. Տերտերյանը այդ տարիներին գրում է երկու ընդարձակ աշխատություն, անմահ երգիծարան Հակոբ Պարոնյանի և Երվանդ Օտյանի մասին։

1944 թվականին Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական համալսարանը հրատարակում է պրոֆ. Տերտերյանի աշխատությունների մի ընդարձակ ժողովածու «Հայ կլասիկներ» վերնագրով, բաղկացած 900 էջից, որտեղ գետեղված են հեղինակի մի շարք կարևոր երկերը, այդ թվում նրա այնպիսի ծավալուն աշխատությունները, ինչպես «Պարոնյանի գեղագիտական հայացքները», «Մուրացանը», «Նար-Դոսը», «Երվանդ Օտյանի ստեղծագործությունը», «Թումանյանի հայրենասիրական պոեզիան», «Հակոբ Հակոբյանը և մեր օրերը» և այլն։

Պրոֆ. Ա. Տերտերյանի վերոհիշյալ աշխատությունները իրենց վիճելի կամ սխալ որոշ դրույթներով հանդերձ, աչքի են ընկնում փաստական հարուստ նյութով, հեղինակի բազմակողմանի ու խորը իրազեկությամբ ամբողջ հայ գրականության ու համաշխարհային կուլտուրային։ Ի տարբերություն նախորդ երկու տասնամյակների ստեղծագործությունների, որտեղ Տերտերյանը գեղարվեստական աշխատությունների վերլուծման ժամանակ շեշտը դնում էր գերազանցապես սոցիոլոգիական հարցերի վրա, հաճախ տուրք տալով վուլգար սոցիոլոգիային, վերջին տարիների ստեղծագործություններում նա առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հայ գրողների երկերի գեղարվեստական առանձնահատկությունների բացահայտման վրա, երևան բերելով այն նորը, ինքնատիպը, որով այս կամ այն գրողը գրավում է իր տեղը հայ գրականության պատմության մեջ։

Պրոֆ. Տերտերյանը վերջին տարիներին իր ուժերը նվիրել էր Շիրվանզադեի և Պռոշյանի մասին ընդարձակ մոնոգրաֆիաներ գրելու աշխատանքին։ Նրանց երկուսի մասին էլ նա թողել է ծավալուն և հմտալից մենագրություններ։

Պրոֆ. Տերտերյանի մահով մենք կորցրինք սովետահայ գրականագիտության խոշորագույն ներկայացուցչին, որի հիշատակը հավերժ անմար կմնա նրա հազարավոր աշակերտների և ամբողջ ժողովրդի սրտում։

ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ
ՊՐՈՖ. Ա. ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՈՉ ԼՐԻՎ)

1. Վահան Տերյան, ցնորքի ծարավի և հաշտության երգիչը, Թիֆլիս, 1910, 105 էջ։
2. Միքայել Նալբանդյան, ազգության հրապարակախոսը, Ալեքսանդրապոլ, 1910։
3. Հովհաննես Թումանյան, Հայրենի եզերքի բնաբերդուն, Վաղարշապատ, 1911, 84 էջ։
4. Շիրվանզադե, հայ ընտանիքի և ինտելիգենտի վիպասանը, 30-ամյա գրական գործունեության առթիվ։ Թիֆլիս, հրատարակություն «Գեղարվեստ» հանդեսի, 1911, 198 էջ։
5. Հով. Հովհաննիսյան, սիրո և կարեկցության երգիչը, 30-ամյա հոբելյանի առթիվ (1882—1912), Երևան, 1912, 104 էջ։
6. Մուրացանը որպես մտածող և գեղագետ, Գրական-քննադատական ուսումնասիրություն, արտատպություն «Շողեր» ժողովածուից, Պետերբուրգ, 1913, 139 էջ։
7. Նար-Դոսի ստեղծագործությունը, Գրական-քննադատական ուսումնասիրություն, «Նոր հոսանք» № 2, 3, 4, Թիֆլիս, 1913։
8. Ավետիք Արասխանյան, «Նոր հոսանք», № 1, 2, 3 և 4, Թիֆլիս, 1914։
9. Հայոց նոր գրականություն, համառոտ դասընթաց, Պետական հրատարակչություն, Երևան, 1922։
10. Նկատողություններ մեր գյուղագիրների մասին, ՀՍԽՀ Պետական համալսարանի գիտական տեղեկագիր, № 2—3, 1927։
11. Նալբանդյանի գրական հայացքները, «Նոր—ուղի», գիրք 4, 1929։
12. Մերենց, Տեղեկագիր ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, № 4, 1929։
13. Հայոց նոր գրականության պատմություն, 19—20 դդ., Երևան, Պետական համալսարանի հրատ., Առաջադրություն № 1—8, 1930։
14. Հայոց նոր գրականության պատմություն, 19—20 դարեր, Առաջադրություն № 1—8, հրատ. Երևան Հեռ. մանկ. ինստիտուտի, Երևան, 1931։
15. Ջավախեցին իբրև գյուղագիր, Առաջարան, Ջավախեցի «Պատկերներ» գրքի, Երևան, 1930։
16. Հակոբ Պարոնյանի ստեղծագործությունը, Հ. Պարոնյանի երկերի լիակատար ժողովածուի 1-ին հատոր, Երևան, 1931։
17. Գրական ոճի սոցիոլոգիան, «Նոր ուղի» № 1, 1929։
18. Մի քանի խոսք Երվանդ Օտյանի մասին, Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, Երևան, 1935։
19. Մուրացանը իբրև գյուղագիր, Մուրացան, Ընտիր երկեր, հատ. 1-ին, Երևան, 1936։
20. Երվանդ Օտյան, «Խորհրդ. գրակ.» № —3, 1937։
21. Հայոց նոր գրականության պատմություն, 19—20 դարեր (սղագրական դասախոսություն), Երևանի Պետական համալսարանի հրատարակչություն (1—8 պրակ), Երևան, 1938—1939։

Պրակ 1. Վ. Փափազյան
Պրակ 2. Հ. Հովհաննիսյան
Պրակ 3. Հ. Թումանյան
Պրակ 4. Ա. Մատուրյան
Պրակ 5. Ա. Իսահակյան
Պրակ 6. Շ. Կուրղինյան
Պրակ 7. Հ. Հակոբյան
Պրակ 8. Վ. Տերյան

22. Գևորգ Մարզպետունին իբրև պատմական վեպ, «Գրական թերթ», 1939, հունիսի 20։
23. Նալբանդյանի էսթետիկան, Պետ. համալսարանի գիտ. աշխատ., հատ. 10, 1939։
24. Պուշկինը հայ գրականության մեջ, Պետ. համալսարանի գիտական աշխ., հատ. 10, 1939։
25. Գևորգ Մարզպետունին իբրև պատմական վեպ, Մուրացան, Ընտիր երկեր, հատ. 3։
26. Հայ նոր գրականության հիմնադիրը, «Սովետ. գրակ.» № 4, 1941։
27. Նալբանդյանը որպես պոլեմիստ, «Գրական թերթ», 1941, ապրիլի 20։

28. Պարոնյանի գեղագիտական հայացքները, «Սովետական գրականություն» 2, 3, 5—6, 7, № 1, 1941։
29. Արովյանի ստեղծագործությունը, Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1941, 388 էջ։
30. Ալիշանը և հայրենասիրությունը, «Սովետ. գրակ.» № 3 և 4, 1942։
31. Հայրենասեր կին Մերենցի վեպերում, «Սովետ.գրակ.» № 5—6, էջ 140—148, № 7, 1942։
32. Հայ հայրենասեր գրողներ (երկու դիմագիծ). 1. Հովհ. Թումանյանի հայրենասիրական պոեզիան. 2. Ղ. Ալայանը և ժողովրդական հերոսությունը, Երևանի Պետ. համալսարանի հրատարակչություն, 1942։
33. Սունդուկյանը և ժողովուրդների բարեկամությունը, «Սովետ. գրակ.» № 1. 1943։
34. Հակոբ Հակոբյանը և մեր օրերը, «Սովետական գրականություն» № 8, 9, 1942։
35. Հայ կլասիկներ, Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1944։
36. Վ. Բրյուսովը և հայ կուլտուրան, Երևան, 1944, 173 էջ։
37. Ռուս մեծ առակախոս բանաստեղծը. Կռիլովի մահվան 100-ամյակի առթիվ, 1944, 118 էջ։
38. Կռիլովը հայ գրականության մեջ, «Սովետ. Հայաստան», 1944, նոյեմբերի 21։
39. Սովետահայ պատմավեպը (գրախոսական Ստ. Զորյանի «Պապ թագավորը» վեպի մասին), «Սովետ. Հայաստան», 1945, հուլիսի 28։
40. «Ռուզան», «Սովետ. Հայաստան», 1945, նոյեմբերի 31։
41. Զոհրապի արվեստը, Հայկական ՍՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիր» (Հաս. գիտություններ) № 8, 1946, էջ 3—30։
42. Շիրվանզադեն որպես երգիծաբան, Սովետական գրականություն և արվեստ, № 2, 1946, էջ 200—225։
43. Շիրվանզադեի տիպական արվեստը, Հայկական ՍՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիր» (Հասարակական գիտություններ) № 8, 1946, էջ 3—30։
44. Շիրվանզադեի «Արհավիրքի օրերին» դրաման, «Գրական թերթ», 1946, մայիսի 20։
45. Շիրվանզադեի տիպերի էպոխան, Հայկ. ՍՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիր» (Հաս. գիտ.) № 2, 1947, էջ 3 -27։
46. Շիրվանզադեն որպես դրամատուրգ, «Սովետական Հայաստան, ամսագիր, № 8—9, 1946։
47. Փիլիսոփայական խոհը Հովհաննիսյանի ստեղծագործության մեջ, «Սովետական գրականություն և արվեստ» № 1—2, 1946։
48. Շիրվանզադեի լեզուն և ոճը, Հայկական ՍՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիր», 1947, 35 էջ։
49. Շիրվանզադեն և մեր օրերը, «Գրական թերթ», 1947, փետրվ. 23։
50. Նար-Դոս (ծննդյան 80-ամյակի առթիվ), «Ավանդարդ», 1947, մարտի 1։
51. Վ. Գ. Բելինսկի—ռուս մեծ քննադատ հրապարակախոսը, մահվան 100ամյակի առթիվ, 1848—1948, Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական համալսարանի հրատարակություն, Երևան, 1948, 584 էջ։